

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Հունվարի 17-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց երկօրյա պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Վրաստանի արտաքին գործերի նախարար Գելա Բեժուաշվիլիին՝ ՀՀ ԱԳ փոխնախարար Գեղամ Ղարիբջանյանի և երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց երկու պետությունների միջև հարաբերությունների ու համագործակցության զարգացման առիթով:

Նորին Սրբությունը մասնավորապես անդրադարձավ Հայ Եկեղեցու Վիրահայոց թեմի շուրջ ստեղծված վիճակին՝ վստահություն հայտնելով, որ բոլոր դժվարությունները կհարթվեն եղբայրական սիրով, փոխհասկացողությամբ և այն գիտակցությամբ, որ երկու ժողովուրդների բարեկամությունը դարերի համար է:

Իր հերթին, Վրաստանի արտաքին գործերի նախարար Գելա Բեժուաշվիլին, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, Համայն Վրաստանի Պատրիարք Իլիա Բ-ի եղբայրական ողջույններն ու բարեմաղթանքները փոխանցեց Նորին Սրբությանը: Նախարարը ներկայացրեց Հայաստան այցի արդյունքները: Վիրահայոց թեմի խնդիրների վերաբերյալ նախարարը տեղեկացրեց, որ այժմ վրաց իշխանությունները փորձում են ինչպես Հայոց թեմի, այնպես& երկրի կրոնական դաշտում առկա խնդիրները լուծման առաջնորդել:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: